ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«27» փետրվարի 2023թ. № 186

«ԴԱՎԻԹ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 106-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԴԱՎԻԹ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2023 թվականի փետրվարի 27-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԴԱՎԻԹ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66949836) տալ «ՀՀ Լոռու մարզ, գ. Ջրաշեն Երևանյան խճուղի 2» հասցեում գտնվող ճաշարան-խորտկարանում (հիմնական շինություն՝ 40 քառակուսի մետր մակերես) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ 2023 թվականի 1-ին եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. փետրվարի 27
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«27» փետրվարի 2023թ. № 187

ՖՐԻԴԱ ԿԻՐԱԿՈՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ՄԱՐԻՆԵ ՂԱԶԱՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԵՎ ՌՈՄԱՆ ՂԱԶԱՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ, ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշմամբ, հիմք ընդունելով թիվ ՎԴ/1390/05/20 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2022 թվականի սեպտեմբերի 8-ի վճիռը, ***որոշում եմ.***

1. Ֆրիդա Կիրակոսի Ավետիսյանին, Մարինե Ղազարի Ավետիսյանին և Ռոման Ղազարի Ավետիսյանին ընդգրկել Հայստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ փետրվարի 27
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«27» փետրվարի 2023թ. № 188

ԳԱՐԻԿ ԳԱԳԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գարիկ Գագիկի Սահակյանի ներկայացուցիչ Արևհատ Գնելի Պետրոսյանը 2023 թվականի փետրվարի 8-ին ներկայացրել է վարչական բողոք, որով խնդրել է տրամադրել օրենքի ուժով գոյություն ունեցող շինարարության թույլտվություն տրամադրելու մասին վարչական ակտի օրինակը:

Վարչական բողոքում նշված է, որ ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի գործողությունները (անգործությունը) կատարվել է ՀՀ Սահմանադրության 40-րդ, 50-րդ, 60-րդ հոդվածների խախտմամբ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 28-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 48-րդ հոդվածների խախտմամբ, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի խախտմամբ:

Վարչական բողոքում նաև նշված է, որ բողոքը ենթակա է բավարարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի կիրառմամբ:

Գարիկ Գագիկի Սահակյանի վարչական բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 40-րդ հոդվածով սահմանված է.

«1. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:

3. Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունք:

4. Ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 40-րդ հոդվածով սահմանված նորմերի բովանդակությունից հետևում է, որ դրանք որևէ կապ չունեն Գարիկ Գագիկի Սահակյանի վարչական բողոքով ներկայացված պահանջի հետ, և վարչական բողոքի քննարկման ժամանակ Գարիկ Գագիկի Սահակյանը չի հիմնավորել դրանց միջև առկա կապը, ինչպես նաև չի հիմնավորել, որ վարչական մարմինն իր գործողություններով կամ անգործությամբ խախտել է Գարիկ Գագիկի Սահակյանի ազատ տեղաշարժվելու իրավունքը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածով սահմանված է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածով սահմանված նորմերի բովանդակությունից հետևում է, որ դրանք որևէ կապ չունեն Գարիկ Գագիկի

Սահակյանի վարչական բողոքով ներկայացված պահանջի հետ, և վարչական բողոքի քննարկման ժամանակ Գարիկ Գագիկի Սահակյանը չի հիմնավորել դրանց միջև առկա կապը, ինչպես նաև չի հիմնավորել, որ վարչական մարմինն իր գործողություններով կամ անգործությամբ խախտել է Գարիկ Գագիկի Սահակյանի սեփականության իրավունքը:

Ինչ վերաբերում է վարչական բողոքում նշված՝ Սպիտակի համայնքապետարանի կողմից ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 28-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 48-րդ, հոդվածների, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոք բերողի պնդումներին և այն պնդմանը, որ բողոքը ենթակա է բավարարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի կիրառմամբ, ապա անհրաժեշտ է նշել հետևյալը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական ակտը չի կարող ընդունված համարվել, եթե դա սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն առ ոչինչ է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված է.

«Առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

(...)

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք»:

Շինարարության թույլտվության տրամադրման կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման թիվ 1 հավելվածի 98-րդ կետով սահմանված է, որ

կառուցապատողը, նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և միաժամանակ շինարարության թույլտվության ստացման նպատակով դիմում է (N 2 հավելվածի N 2-1 ձև) իրավասու մարմնին՝ կցելով շինարարության թույլտվության (իսկ սույն կարգի 116-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաև քանդման թույլտվության) համար օրենքով սահմանված տեղական տուրքը վճարելու մասին անդորրագիրը (անդորրագրերը), նախագծային փաստաթղթերը (երկու օրինակից), փորձաքննության դրական եզրակացությունը (եզրակացությունները) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախագծային աշխատանքների կապալառուի գրավոր երաշխավորագիրը, ինչպես նաև սույն կետում նշված ձևաթղթում ներկայացված այլ տեղեկություններ: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ տեղական տուրքը վճարելու մասին անդորրագրի (անդորրագրերի) փոխարեն կարող է ներկայացվել նաև պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը (այսուհետ՝ անդորրագիր):

Տվյալ պարագայում Գարիկ Գագիկի Սահակյանը Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ սահմանված կարգով չի ներկայացրել շինարարության թույլտվություն ստանալու վերաբերյալ դիմում, չի ներկայացրել ապացույց այն մասին, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ներկայացրել է շինարարության թույլտվություն ստանալու վերաբերյալ դիմում, հետևաբար չի կարող ակնկալել օրենքի ուժով շինարարության թույլտվության կամ դրա տրամադրելու մասին վարչական ակտի գոյությանը, իսկ վարչական մարմնի կողմից օրենսդրական նորմերի խախտման վերաբերյալ վարչական բողոքում նշված պնդումներն անհիմն են, քանի որ դրանք վարչական մարմնի կողմից չեն կարող խախտված լինել, այն պատճառաբանությամբ, որ, ինչպես արդեն վերը նշվել է, Գարիկ Գագիկի Սահակյանի կողմից շինարարության թույլտվություն ստանալու վերաբերյալ դիմում չի ներկայացվել:

Ավելին, առանց Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ սահմանված կարգով դիմում ներկայացնելու շինարարության թույլտվություն տրամադրելու դեպքում այն կհանդիսանա առ ոչինչ վարչական ակտ, քանի որ դրանով հասցեատիրոջը կտրամադրվի ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք, հետևաբար այն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն չի կարող ընդունված համարվել:

Գարիկ Գագիկի Սահակյանն իրեն սեփականության իրավունքով պատկանող 06-006-0498-0007 կադաստրային ծածկագրով հողամասի վրա կառուցված շինությունը Կադաստրի կոմիտեում հաշվառել է որպես ինքնակամ կառույց, ինչը հաստատվում է հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքով (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022XYJVFC): Նշված հանգամանքը ևս փաստում է, որ Գարիկ Գագիկի Սահակյանը գիտակցել է, որ ինքը շինարարության թույլտվություն ստանալու դիմում չի ներկայացրել, շինությունը կառուցել է ինքնակամ՝ առանց սահմանված կարգով տրամադրված շինարարության թույլտվության, հետևաբար չի կարող ակնկալել օրենքի ուժով շինարարության թույլտվության կամ դրա տրամադրելու մասին վարչական ակտի գոյությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, 76-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Գարիկ Գագիկի Սահակյանի 2023 թվականի փետրվարի 8-ի «Օրենքի ուժով գոյություն ունեցող շինարարության թույլտվության տրամադրելու մասին վարչական ակտի օրինակը տրամադրելու մասին» վարչական բողոքը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. փետրվարի 27
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» փետրվարի 2023թ. № 189

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 197 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 197 որոշմանը կից ցուցակում չի նշվել Օնիկ Սուրենի Մաթոսյանի (ծնված 12.04.1946թ.) հայրանունը, հիմք ընդունելով Օնիկ Սուրենի Մաթոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի «Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան, Առափնյա, Պանրագործների, Թումանյան և Բանավան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 197 որոշմանը կից ցուցակի 416-րդ տողում գրված «Օնիկ» բառից հետո լրացնել «Սուրենի» բառը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. փետրվարի 28
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«01» *մարտի* 2023թ. № 190

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՔԱՋԻԿ ՀՐԱՉԻԿԻ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-006-0271-0045 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,07 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ N 2097144 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006FGG94SD) և Քաջիկ Հրաչիկի Խառատյանի (ծնված՝ 06.11.1967թ.) ներկայացուցիչ Վաչագան Հրաչիկի Խառատյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Քաջիկ Հրաչիկի Խառատյանին սեփականության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0271-0045 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,07 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին, դրա վրա գտնվող 119,8 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը, 23,1 քառակուսի մետր մակերեսով անասնագոմին և 35,0 քառակուսի մետր մակերեսով խոհանոցին տրամադրել «Սպիտակ Սպիտակ ք., Կամոյի փողոց, 12/1 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. *մարտի* 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«01» մարտի 2023թ. № 191

«ԱՐՄԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 106-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԱՐՄԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2023 թվականի մարտի 1-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐՄԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66897992) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Ս. Ավետիսյան փ. 241» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 39,22 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2023 թվականի 1-ին եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. մարտի 1
ք. Սպիտակ